ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» հուլիսի 2025 թ. N 121-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացված «ՄՈԴՈՒԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի հուլիսի 23-ի և «ԴԻՍԻ-ՏԵԼԵՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի հուլիսի 25-ի դիմումները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «ՄՈԴՈՒԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի» 3-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-000104) «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-000104-06) գործողությունը:
2. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով «ԴԻՍԻ-ՏԵԼԵՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառի «Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի» 2-րդ դասի լիցենզիայի (ՔՊԼ-001138) և «Էլեկտրամատակարարում» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-001138-05) գործողությունը:
3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

7/28/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ